

գործ է կատարում հեթանոսների աշխարհում. այլ առաւել այն ներքին շարժման մէջ, որից անմասն չի մնացել զբեթ է ոչ մի եկեղեցական համայնք: Զօրեղ ընդհարումը ժամանակակից քաղաքակրթութեան հետ ստիպել է բոլորին ըննական աչքով նայել իրենց վերայ, կամայ ակամայ բարեփոխութիւններ մտցնել իրենց կաղամկերպութեան մէջ, ուղղել թերութիւններն ուր կարելի է, հոգ տանել պաշտօնեաների կրթութեան մասին, փոխառնել հակառակորդից գիտութեան գէնքը սեփական սկզբունքները պաշտպանելու համար, և արդիւնքն այն է, որ եթէ հաւատացող քրիստոնեաների թիւը քիչ էլ լինի քաղաքակրթութեան աշխարհում՝ նոցա հաւատը գիտակցական է և հաստատուն, իսկ այդ շատ բան է նշանակում ապագայի նկատմամբ: Ներկայումս դաւանութեամբ միմեանցից բաժանուած եկեղեցիներին համար ներքին հաշիւները չեն դիւար խնդիր, այլ այն, թէ ինչպէ՞ս պէտք է պահեն քրիստոնէութեան հեղինակութիւնը լուսաւորուած մարդկութեան առաջ: Անցեալ դարում ենթադրում էին, թէ միայն լուսաւորութեան առաջը փակելով կարելի է այդ մեր դարն ապացուցեց, որ դարան ամենեւին կարելի չկայ, այլ պէտք է մի կողմից գիտութեան և հաւատոյ, միւս կողմից՝ եկեղեցւոյ մէջ, պատահականի և յաւիտենականի սահմանները որոշ դնել, որպէս զի դուռ քրիստոնէական ճշմարտութիւնները երեւան գան և իրենց յատուկ պայծառութեամբ դբաւեն կրկին զէպի լոյս ձգտող մարդոց սրտերը: Այդ պահանջը զեռ այժմ շատ տեղ ինչպէս հարկն է չի զգացուում, բայց անհրաժեշտաբար կզգացուի հետզհետէ ապագային, և որչափ շուտ բաւականութիւն տրուի նորան, որչափ շուտ միացնեն դանազան եկեղեցիներ իրենց ոյժերը ընդհանուր գաղափար պաշտպանելու համար՝ այնչափ աւելի մօտ է ու հաւատալի քրիստոնէութեան յաղթանակը:

Զօհմ, իւր վերեւ յիշուած գրքի մէջ, նմանեցնում է ժամանակակից հասարակութիւնը մեր հողագնաին, որի ներքը լիքը կրակ է, զբսից մի բարակ շերտով պատած. ամէն բոլոր կրակը դուրս ժայթքել և ահաղին աւերումներ գործել կարող է: Սակայն յայտնի է, որ հողագնաի կեղևը հրաշին միջուկի համեմատութեամբ շատ բարակ լինելով՝ հանգերձ՝ այնչափ ոյժ ունի, որ գիմանալ կարող է, և եթէ ներքից ժամանակ առ ժամանակ ժայթքումներ տեղի են ունենում՝ ելումը խառնուում է շուտով գրոխ նիւթի հետ, ենթադրուում նորա օրէնքներին և նոր աւելի փաթեմ կենար դարդացնելու պատճառ լինում: Այդպէս է նաև հասարակութիւնը. դարերի ընթացքում նորա մշակած կարգերն ու պատած գաղափար-

ները մի անգամից հեշտութեամբ զոհ գնալ չեն կարող ներքին խրտումների, և այն զօրեղ կոիււր, որ կայ այժմ այդ կարգերը պաշտպանողներ և նոցա գէժ բողոքողների մէջ՝ նորանով չի վերջանայ անշուշտ, որ բողոքողները յաղթեն և ամէն ինչ ոտքի տակ տան, այլ որ նոքա իրենց օրինաւոր պահանջների բաւականութիւնը գտնեն և մի որոշ մաս միւսների վայելած բարեքներին: Քրիստոնէութեան դերն այս գէպքում պահպանողական չէ միայն, այլ նաև վերանորոգչական. նա կուտած է աւերումների առաջն առնելով՝ միանգամայն մաքաւող ուժերին ուղղութիւն տալ և աշխատել որ հասարակաց բարեքը յառաջ բերեն: Թէ նա կարող է այդպիսի դեր կատարել և պէտք է կատարէ՝ ապացոյց է այն պարզ հանգամանքը, որ արդէն ամբողջ աշխարհի համար գաղափարական բարոյականութիւնը քրիստոնէականն է, և թէպէտ շատերը գնահատում են այդ բարոյականութիւնը առանց գիտակցելու կամ ընդունելու, թէ քրիստոնէական հաւատից է բղխում. բայց այդ մի ժամանակաւոր նախապաշարում է, որ կլինի նոր կարելի կլինի հաւատոյ վսեմութիւնը նոյն պարզութեամբ ներկայացնել ապագայ սերունդներին, ինչպէս անցեալների համար պարզ է եղել բարոյականի վսեմութիւնը: Եւ երբ այդ կլինի, այն ժամանակ քրիստոնէութեան բարոյական սկզբունքները լոկ ճանաչողութիւն չեն մնայ, այլ կենանք մէջ կմանեն և կենանք կգառնան. այն ժամանակ եկեղեցւոյ և լուսաւորեալ հասարակութեան մէջ եղած այժմեան խորթութիւնը կվերանայ և ազատ ասպարէզ կբացուի ընդհանուր փրկութեան համար աշխատելու:— Ինչպէս մի դար առաջ ոչ որ չէր կարող դուշակել, թէ եկեղեցին այն կլինի այժմ, ինչ որ է, այնպէս և այժմ գծուար է դուշակել, թէ ինչ կլինի նա մի դար յետոյ: Նա գուցէ այժմեան ունեցածից շատ բան կկորցնէ, բայց որ նորա իսկական վստտակը, Աստուծոյ արքայութեան համար ձեռք բերած վստտակը, մեծ կլինի այնուամենայնիւ՝ անկասկած է ամէն հաւատացողի և պատմութեան մէջ նախախնամութեան վարել, աջը տեսնողի համար:

ՕՐԹՈՂՈՔՍ ԵՎԵԼԵՑԻ.

Նոյեմբեր 7-ին շատ մեծ հանդիսով տօնուեցաւ Պիեյում Սրբ. Բոաննիկի մետրապոլիտի բահանայութեան 50-ամեայ յորելանքը, որ ս. Սինոդի նախագահող անգամ լինելով՝ ամենաբարձր պաշտօնեան է այժմ Ռուսաց եկեղեցւոյ Սրբ. Բոաննիկի միենոյն ժամանակ իւր մարտիր և արգիւնաւոր անցեալով (նա սկսել է իւր գործունէութիւնն իբրեւ գաւախտ Պիեյի Հոգևոր ճեմա-

բանում: ուր և աւարտել է ուսումը. եղել է ապա Պետերբուրգի Հոգևոր Ճեմարանի տեսուչ, Սարատովի և Նիժնի Նովգորոդի եպիսկոպոս, Վրաստանի Էկզարխ, Մոսկուայի և վերջը Կիևի մետրապոլիտ) ռուսաց բարձր հոգևորականութեան մէջ ամէնեւ աւելի անկեղծ համակրութիւն և մեծ յարգ վայելող անձնաւորութիւններէն մէկն է: Այդ արտայայտուեցաւ տօնի օրը Ռուսաստանի ամէն կողմերէն ընդունած սրտագին շնորհաւորութիւններով և բազմաթիւ պատգամաւորութիւնների արտասանած ճառերով: Հանգիսին անձամբ մասնակցելու համար Կիևի էին եկել Մոսկուայի մետրապոլիտ Սրբ. Վլադիմիրը և մօտ 30 արքեպիսկոպոսներ ու եպիսկոպոսներ: ուղեկից վարդապետներով ու քահանաներով. իսկ աշխարհական ներկայացուցիչներէն՝ ս. Սինդի օրեր—Պրոկուրորի օգնական Սաբլէր, որ և կարգաց Նորին Կայսերական Մեծութեան հրովարտակր յանուն Յօրեւելարի: Բագաւոր Կայսրը Իւր բարձր գոհունակութիւնը յայտնելով Սրբ. մետրապոլիտ Ռուսաց եկեղեցուն մատուցած մեծ ծառայութիւնները համար շնորհում է նորան ս. Անդրէաս Նախակոչ առաքելի շքանշանի ադամանդով զարդարած նշանները (ամենաբարձր շքանշանը): Շնորհաւորական գրութիւններ կարգացուեցան այնուհետև ս. Սինդի, Պետերբուրգի մետրապոլիտ և Հոգևոր Ճեմարանի կողմէն և այլն:

Հիւրերի մի մասը տեղ էր հասել արդէն Նոյեմբեր 4-ին, որ Սրբ. Իոաննիկիյի անուանակոչութեան օրն էր: և այդ առթիւ Կիևի գլխաւոր եկեղեցիներում մի քանի նորեկ եպիսկոպոսներ պատարագ մատուցին: Հանգիսաւոր պատարագ և մարգիսնք եղաւ նաև տանի օրը բոլոր եկեղեցիներում: որոնցից մեծ մասն մէջ մի կամ մի քանի եպիսկոպոսներ միասին պատարագում էին: սկսած Յօրեւելարից և Սրբ. Վլադիմիր մետրապոլիտից, և մեծ բազմութիւն ներկայ էր. գոհաբանական մարգիսնք մատուցին նաև Պետերբուրգի եկեղեցիներում և ուրիշ տեղեր: Պատարագից յետոյ Յօրեւելարն ընդունեց իւր ընտկարանում շնորհաւորութիւններ և դրսից եկած պատգամաւորութիւններ. ապա հանդիսաւոր ճաշ արուեստաւ 300 հրաւիրեալների, որի միջոցն զգացուած ճառ ասաց Սաբլէր:

— Նոյեմբեր 23-ին Մոսկուայի նահանգի մի գիւղում վախճանած այրի Մեղվեանիկովան իւր ահագին 5 միլիոնից անց կարողութիւնը կտակել է զանազան բարեգործական նպատակները համար: Մի միլիոնը պէտք է գործ դրուի Մոսկուայում մի հիւանդանոց հաստատելու, մէջը եկեղեցի, ուր կինամուսն անբուժելի հիւանդներ, 600 հազարը ապուշների և ընկճաւորների ապաս-

տանարանի համար. 300 հազարը մի անկեղծանոց բանալու 30 ծերունիների և 30 պառաւանքի համար. 100 հազար յօդուտ քրիստոնեայ աղքատների. 50 հազար Մոսկուայի համալսարանին՝ թուշակներ հաստատելու նպատակով. 70 հազար դանդան մանր բարեգործական հաստատութիւններին. 500 հազար Իրկուտսկում մի հիւանդանոց բանալու. 100 հազար Իրկուտսկի աղքատներին. 500 հազար դանդան վանքերի և եկեղեցիներին և ընդ:— Որչափ բարեկարգ է յառաջ բերել ուրեմն մի անձի բարի կամքը:

Բացի այս արտաբարդ դէպքից ուրիշ խոշոր նուիրարներութիւններ ևս եղել են վերջին ժամանակ Ռուսաստանում: մանաւանդ ուսումնական գործի համար: Այս կարգի բարեգործներից աչքի է ընկնում գաղանի խորհրդական Տերեշչենկո՝ 250 հազար բուրլի նուիրած լինելով Կիևի արտական և իդական վաճառականական դպրոցներին և 150 հազար ը. յանուն Աղէքսանդր Բ-ի Կիևում գտնուող բազմաբուհ տեսան ճեմարանին:

— Перк. Вѣстникъ թերթը յառաջ է բերում մի հետաքրքրական թղթակցութիւն, որ տեղի է ունեցել վերջերս, իբրև հետեանք Սաբլէրի Յովհաննէս եպիսկոպոսի անցեալ թուականի փետրուարին Կ Պոլսոյ Յունաց պատրիարքին տուած այցելութեան՝ այս վերջինիս և Կենտրոնը բարեպիսկոպոսի մէջ: Երկուստեք թուով Գրեգորիկ արքեպիսկոպոսը մի նամակ է ուղղում Կոստանդնուպոս Ե. պատրիարքին: որով իւր մեծարանքը յայտնելուց յետոյ՝ կամենում է պատասխանել այն հարցին: թէ ի՞նչ եղանակաւ կարելի է աւելի մօտ յարաբերութիւն հաստատել Արևելեան և Անդրիկան եկեղեցիների մէջ: Նա ասում է: որ գրով այս խնդրի մանրամասնութիւնները պարզել և առաջուց մի որոշ ծրարիք տալ՝ դուր աշխատանք կլինէր. ժամանակն ու հանգամանքները պէտք է օգտին հետգհեաէ մերձեցման միջոցներ գտնելու: Առ այժմ, իբրև փոխադարձ յարգանաց նշան և միմեանց հետ ծանօթանալու առիթ՝ նա առաջարկում է: որ մի կողմից պատրիարքը իւր Լոնդոնում գտնուած եկեղեցականներին պատուիւրէ նշանաւոր տօներին այցելել Կենտրոնը բարեպիսկոպոսին: միւս կողմից ինքը նոյնը կպատուիւրէ Կ. Պոլսում գտնուող իւր ներկայացուցիչն. ապա երկու կողմից փոխադարձաբար միմեանց յայտնեն իրենց եկեղեցիների մէջ եղած կարևոր դէպքերը: Երեպիսկոպոսը խոստանում է իւրաքանչիւր տարի ուղարկել պատրիարքին իւր եկեղեցւոյ պաշտօնէութեան վերաբերեալ մանրամասն տեղեկութիւններ պարունակող մի քանի գրքեր և յոյս է յայտնում, որ դուրսէ կկարողանան իւրայինք օգնել նորան հոգևոր կրթութիւնը զօրացնելու և մանաւանդ ս. Գիւրգ

տարածելու գործում. շատ ուրախ է նաև որ պատրիարքի կողմից մի տարիաւադ Անդղիա է ուղարկուած անդղիներէն սովորելու և անդ. եկեղեցուն ի մօտոյ ծանօթանալու համար:—Պատրիարքի պատասխանն աւելի ընդարձակ է և շատ սրտազին. նա իւր կատարեալ համաձայնութիւնն է յայանում բոլոր առաջարկներէ համար և շտապում է հաղորդել ի միջի այլոց Աղեքսանդրիոյ Սահրանիտ պատրիարքի մահը: Յատկապէս կըրթութեան և ս. Գրքի տարածման խնդրի վերաբերութեամբ նա ասում է, որ մի յանձնաժողով է կազմել տուել այդ խնդրը՝ քննելու: որին մասնակցում է արքեպիսկոպոսի ներկայացուցիչը. իսկ մի ուրիշ յանձնաժողով արդէն տարուց աւելի է ինչ աշխատում է ս. աւետարանը պատրիարքական տպարանում տպելու: որ և շուտով կհրատարակուի հաղարաւոր օրինակներով: և այդպէս միտնարները պատճառ չեն ունենայ այլ ևս ս. Գրքի անուան ներքոյ հետը միասին ուրիշ: օրթոգրոս քրիստոնեաների համար դպրոցները ցուցիչ գրքեր տարածելու և դասնախօսութեան զրդելու: որ գլխաւոր պատճառներից մէկն է դէպի օտար եկեղեցիները ցոյց տուած սաւնութեան և անվստահութեան:

— Երկար վէճերից և շփոթութիւններից յետոյ Անտիոքի պատրիարք է հաստատուած վերջապէս սուլթանի ֆերմանով նախկին Լաւողիկիոյ մեարապոլիա Մեղեփոսը: Այդպիսով ասորաւորաբան կուսակցութիւնը յաղթութիւն տարաւ ընդդէմ յունականի: որ սովոր էր յոյներ տեսնել միշտ պատրիարքական աթոռի վերայ: մինչ նոր պատրիարքը արար է ծննդետուն: Բայց նա շատ լաւ յունական կրթութիւն ստացած լինելով և իշխելով կատարելապէս յունաբէն լեզուին՝ յոյս է տալիս: որ յարմար միջնորդ կլինի երկու հակառակ տարրերը միմեանց հետ հաշտեցնելու և իւր հօտի խաղաղութիւնը վերականգնելու: С. Пет. Вѣдомости թերթի մէջ մի ընդարձակ վիճարանութիւն բացուեցաւ: որով վիճող կողմերից մէկը հերքում է նորա ընտրութեան կանոնական վաւերականութիւնը՝ միւսը հաստատում:

— Անցեալ սեպտեմբերին վախճանուել է Սիւնիկոյ մեաղապոլիտ Գէրասիմ Բարէգ: որ նոյնպէս ծննդետուն արար լինելով՝ բարձր կրթութիւն էր ստացել Ս. Պետերբուրգի Հոգևոր Ճեմարանում և աւարանելուց յետոյ այնտեղ 1873 թուին դատախոս կարգուել: Ապա նա յայտնի է դարձել իրեն գիտնական՝ Փոս պատրիարքի մասին արած լուրջ հետազոտութիւններով: և առ ժամանակ Պսիպի ու Բիգասի հոգևոր դպրանոցներէ տեսչութիւնն է վարել. ապա վերադարձել է հայերենը ընկի ժողովրդին ծառայելու

նպատակով: Նա վախճանուել է դեռ բոլորովն թարմ հասակում: մինչ իւր գիտնականութեան ու աչքի ընկնող յատկութիւններէ շնորհիւ կարող էր աւելի գործեր կատարել և աւելի բարձր աստիճանի հասնել:

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

Գ Ե Ր Մ Ա Ն Ի Մ .

Ներկայումս վեց դանդաղ գերմանական ընկերութիւններ են գործում հայերի մէջ եղբայրական օգնութիւն հասցնելու նպատակով: որոնք են. ա) Գերմանական օգնող դաշնակցութիւն՝ արեւելքում քրիստոնէական միւրոյ գործը վարելու համար (առաջ Ֆրանկֆուրտի մասնախումբ): բ) Գերմանական օգնող դաշնակցութիւն Հայաստանի համար (առաջ Բերլինի մասնախումբ): գ) Կալդեայիկութի կուսանոցը (հիւանդապահ կանայք՝ պատրաստող մի մեծ հաստատութիւն): դ) Երուսաղէմում գտնուող ասորական որբանոցի մասնախումբ: ե) Գերմանական Երուսաղէմեան ընկերութիւնը: զ) Աւետարանական միութեան (ալլիանց) ընկերութիւնը: Այդ վեց ընկերութիւնները 2200 երեխաներ են խնամում և դատաւարակում: որոնցից 1450 Արեւելքում օգնող դաշնակցութեան իսկ 651 Հայաստանի օգնող դաշնակցութեան որբերն են: Սոցանից առաջինը որբանոցներ է պահում Բէքէհում: Կ. Պոլսի մօտ. Մէզրէում, Հիւսէյնիկում և Պերճանիկում (Խարբերդի վիճակ): Բաւլում: Մարաշում: Վանում: Ամասիայում և Հաջինում: Ընկերութեան ձեռքի տակ աշխատում են այստեղ 23 գերմանացի և բաւական թուով հայ պաշտօնեաներ: Միւս դաշնակցութիւնը որբանոցներ ունի Ուսհայում: Դիարբէքիւում: Ուրմիւում և Խոյում (Պարսկաստան): Ռաշտում և Վարէյայում (Բուլղարիա): 17 գերմանացիներ և մի քանի հայեր ծառայում են սոցա մէջ:

Երկու զուիցերական մասնախմբեր որբանոցներ են հիմնել Սերաստիայում: Պարալիպալում և Պրուսայում: և պահում են 300 որբեր: Պրուսայի որբանոցն անկախ է և ֆրանսիական հովանո ներքոյ: միւս երկու որ մամբիկական հոկոյութեան ներքոյ են և ամբիկական գեապանի հովանին են վայելում:

Ամբիկական և անգլիական ընկերութիւններ խնամում են 2000 որբերի: հայ լուսաւորչականները մօտ 500 *, բողոքական հայերը 3-400 որբերի:

* Այս քիսն անշուշտ անձիւս է կամ միակողմանի հաշուով տուած: Տաճկանայաստանի գերեկ յորտ փոք իշուսկ կարեւոր կիներեկերում որբանոցներ կան բացուած միւս պատրիարքանի հակադրական եկեղից:

Դեռ մօտ 10,000 որբեր դուրսն են մնացել և կորած են խնամքի: Բայց այդ թիւն ևս ճիշտ կարող է համարուել միայն տեղական պայմանների համեմատութեամբ, որ եթէ մի քննադէպ օրենհան 4 կողմէն եկամուտ ունի՝ օգնութեան կարօտ չի համարուում: մինչ սովորական չափով նոցա թիւը շատ աւելի մեծ է: Այս աւելիութիւնները տալուց յետոյ Chronik der Christlichen Welt որբախնամ գործիչներն մէկն նամակից չբաւորութեան և կարօտութեան զարհուրելի օրինակներ է բերում: «Մի քննանիքից մենք մի աղայ վերցրինք, որն մայրն ու քոյրը ցորենի շիւթով հաղիւ կերակրուում էին: Նոցա օրուայ ուտակիքը $\frac{5}{4}$ ֆէնիգ արժէր (գրեթէ $\frac{1}{3}$ կողմէն): Այդ քննանիքը տեմնելու գնացած մէկը՝ իբրեւ միակ ամանակէն, ասան մէջ թիթեղէ մի թաս միայն գտաւ և ցնցոտիներ իբրեւ անկողին, Նորա ետեկց հարեանները կանչում էին. ի սէ՛ր Աստուծոյ, խղճացէ՛ք այդ քննանիքին, սովից մեռնում են: Մի քանի օր առաջ մեզ մօտ բերին մի կմախք դարձած կնոջ, մարդուն մէկը բերել նորան բախում դէմ էր տուել պատին և հեռացել: Մի քննանիքում ջերմող որդու համար կարողացել էին հարեանն տանից ազաւրել մէջ խաշած ցորեն միայն գտնել: Երջակայ գիւղերում տեղ տեղ թշուառութիւնն աւելի մեծ է, քան այնտեղ քաղաքում: Մի գիւղում օր, 40 քննանիքից հաղիւ 3-ը կարող են ամբողջ տարին հաց ուտել: Անցեալ օրը 9 ժամ հեռու գտնուող գիւղից մի ծեր քահանայ եկաւ մեզ մօտ և իւր որդուն բերաւ, որովհետեւ չէր կարող այլ ևս Նորան կերակրել: Նա ինքը ողորմելի, գլղուած տեղք ունէր: Կիւրակները նա իւր պաշտօնն է կատարում, իսկ հասարակ օրերը վարձով բանելու է գնում: Երկար ճանապարհը նա ոտով էր եկել: Երբ հարցրինք, թէ որչափ ուժիկ է ստանում, նա ասաց. ինչպէ՞ս կարող են մեր մարդիկ ինձ ուժիկ տալ, քանի որ իրենք ոչինչ չունեն. ասն օրերին ինձ համար մի քանի զուրուշ ժողովում տալիս են: Այսպիսի կարելի հանդէպ թող Հայաստանի բարեկամները Առաքելին խօսքը ձեռն Զբարէս գործել մի ձանձրացութիւն:

Առանձին դժուարութեան են հանդիպում օգնող ընկերութիւնները Դիւրբէքերի վիճակից: Նորա կամքով Դիւրբէքերի և Բալուի որբանոցները միախուցանի, և երբ անգլիական ու ամերիկական դեսպաններն իրենց հպատակներին պաշտպանեցին՝ գերմանական դեսպանն ևս սախալուած էր գերմանացւոց որբանոցների բացումը պահանջել, Նորա գործ դրած ճնշման ներքոյ տաճկաց կառավարութիւնից երկու անգամ հրաման է գնացել՝ ձեռք վերցնել որբանոցներից, բայց նա, վստահ երեկ պաշտպանն որոշ կու-

տակցութեան պաշտպանութեան վրայ՝ արհամարհում է բարձրից եկած հրամանը: Բաւական չէ որ այսպիսով ցուրտ ձմեռ ժամանակ խումբ խումբ մանուկներ փողօցն են ձգուած՝ բարբարոսութիւնն այնտեղ է հասնում, որ Բալուի հացթուխները հրաման են ստացել գերմանական ընկերութեան ներկայացուցչին 6—7 ֆունտից աւելի հաց չծախել, նպատակն է արդելել, որ նորա մօտ ամէն օր խումբերով ժողովուող սովալուկները հաց չստանան, և որովհետեւ այդպիսիներն թիւը խիստ մեծ է շրջակայքում, ուրեմն մահուան դատապարտել նոցա:—Դժուարութիւնների է հանդիպում նաեւ Երուսաղէմի ընկերութիւնը, որին թոյլ չեն տալիս իւր ունեցած 20 որբերից աւելի պահել: Բայց առհասարակ բարե գործը յաջողութեամբ յառաջ է գնում, և գերմանական դեսպանատուներ, որ սկզբներում խիստ անբարեհաճ էր դէպի գերմ. հպատակների բարեգործական ձեռնարկութիւնները՝ սկսել է այժմ, դուրսէ քաղաքական նպատակներով, ամէն կերպ պաշտպան հանդիսանալ:

—Christliche Welt թերթի կողմնակիցները, որոնք աստուածաբանական աշխարհում այժմ տիրապետող յառաջադիմական ուղղութեան ներկայացուցիչները կարող են համարուիլ՝ տարբերելի վեր սովորութիւն ունէին աղատ ժողովներ կազմելու և ժամանակակից հարցերի մասին խորհրդածելու: Այժմ Նոքա կազմակերպել են այդպէս կոչուած «Եկեղեցական—աստուածաբանական խորհուրդ Բրանդենբուրգ նահանգի համար», որի առաջին նիստը տեղի ունեցաւ Նոյեմբեր 15-ին Բերլինում: Խորհուրդի նպատակը նորա կանոնադրութեան առաջին յօդուածի համաձայն՝ «չպէտք է լինի մի նոր կուսակցութիւն հիմնել կամ գիտական կարծիքներ փոխանակել, այլ ընդհանուր համոզմունքներ կազմելու և միմեանց միաք հասկանալու միջոց տալ բոլոր այն աստուածաներին և ոչ աստուածաբաններին, որոնք իրենց աղդի փրկութիւնը Յիսուս Քրիստոսի պատմական աւետարանի մէջ են գտնում, աստուածաբանական գիտութեան աղատութիւնը գնահատում են և այն հաւատան ունեն, որ աղատ ուսումնասիրութիւնը և աւետարանն իրար հակառակ չեն, այլ մերժը փոխադարձաբար էրոր օգնել միայն կարող են»: Այս նպատակի համեմատ և բանախօսութեան նիւթ էր ընտրած երեք այնպիսի հիմնական գաղափարներ, որոնց նկատմամբ ամէնից առաջ հարկաւոր էր հաշիւ տալ թէ ինչ են մտածում Խորհուրդի անդամները, որպէս զի կարելի լինի համոզման միութիւն յառաջ բերել նոցա մէջ, —աւետարանական հաւատը, եկեղեցին, աստուածաբանութիւնը, և որովհետեւ այդ նիւթերը մշակել էին երեք առաջնակարգ

ուսուցչապետներ, ուստի նոցա առաջնորդող հայեացքներէն կտրելի է որոշ չափով եղբարհացնել թէ ինչպէս են ըմբռնում առհասարակ այդ գաղափարները մեր ժամանակի գիտուն քրիստոնեայ մարդիկ: Այդ ցոյց տալու համար մենք կրեւրենք այստեղ այն կէտերը որոնց մէջ ամբողջել են նորա իրենց բանախօսութեանց միտքը: Պրոֆ. Վաֆայան խօսելով հաւատոյ մասին հետեւեալ որոշումներն է տալիս. ա) «Աւետարանական հաւատքը իրօք գոյութիւն ունի այնտեղ միայն, ուր նա հաւատացողի անձնական համոզմունքն է կազմում: Երկրի զածօրէն ընդունել աւանդութիւնը՝ նախադուռն է հաւատոյ համար, բայց ոչ արդէն ըստ ինքեան հաւատ: Աւետարանական համայնքը պէտք է իւրեւ իւր բարձրագոյն, ո՛չ մի սահմանափակութեան չենթարկուող նպատակը նկատէ միշտ, բոլոր իւր անդամներին կրթել այնպէս, որ սեփական անձնական հաւատ ունենան, բ) Աւետարանական հաւատքը կապում է հաւատացողին իւր բովանդակութեան հետ. իսկ նորա բովանդակութիւնն զգացում է իւրեւ Աստուծոյ յայնտութիւն, որը ինքն է հաւատ յառաջ բերել, ուստի և հաստատ է հաւատացողի համար՝ անկան նորա ենթակայական հաճութիւնից: Աւետարանական համայնքը կաբիւր ունի այդ պատճառաւ իւր հաւատը մի հաստատուն բովանդակութիւն ունեցող դաւանանքի միջոցաւ արտայայտելու, որին սպա կապում է մնում իւր բոլոր անդամներով: գ) Աւետարանական հաւատը համաձայն չէ՝ ո՛չ սեփական հաւատոյ ազատութիւնը միայն և ո՛չ միայն դաւանանքի հեղինակութիւնը շեշտելը: Պահանջւում է ընդհանրական երկուսը միասին երեւան հանել: Այն համոզումը, որ այդպէս կտրելի է ինքնին հաւատոյ խնդիր է և աւետարանական քրիստոնէի համար ամէն եկեղեցական գործի մէջ առաջնորդող գաղափար պէտք է լինի»:

Թողնում ենք պրոֆ. Հոլցի որոշումներն աւետարանական եկեղեցւոյ մասին, իւրեւ աւելի մասնաւոր ընտելիւն ունեցող, և բերում պրոֆ. Հաւանակի աստուածաբանութեան մասին տուածները. ա) «Աւետարանական աստուածաբանութիւնը քրիստոնէական, կրօնի գիտութիւնն է՝ հասկացում այնպէս, որ աւետարանը և նորա վերանորոգումը բնօրմացիայի միջոցաւ սրտազին գնահատութիւն դառնեն: Աւտի նա աւետարանական եկեղեցիների դատողութեան արտայայտութիւնն է: բ) Աւետարանական աստուածաբանութեան գլխաւոր պարտքերը ներկայում հետեւեալներն են. 1) Նա պէտք է իւր, սկզբունքով ընդունած, գիտական բնաւորութիւնը պահպանէ և կէտ առ կէտ իրականացնէ. 2) Նա պէտք է պատմական գիտութիւն լինի, բայց

վերջին խօսքը պատմութեան չտայ. 3) Նա պէտք է իմանայ, որ մի առանձնայատուկ կեանքի հետ գործ ունի, բայց և չմոռանայ, որ այդ կեանքը իւր արտադրութիւնների միջոցաւ միայն ճանաչել և պարզել կարող է. 4) Նա պէտք է քրիստոնէութիւնը ուրիշ կրօնների հետ համեմատելով գնահատէ, բայց և իմացած լինի, որ համեմատութիւնները հեշտութեամբ չփոխեցնում են. 5) Նա պէտք է առօրեայ եկեղեցական վեճերի մէջ չխառնուի, բայց ամէն մի լուրջ քրիստոնէի աջակից լինի, որ ճշմարտութեան է ձգտում»:

Հետմում պրոֆ. Լուցատի նորերս մի բանախօսութիւն կարգաց հաւատոյ և գիտութեան վերայ, որի մէջ յիշում էր Վոլտէրի գուշակութիւնը, թէ 100 տարի յետոյ Աստուածաշունչի բանը վերջացած կլինի, մինչ այսօր թարգմանուած է այն 200 լեզուներով, եթէ բարբառներն ևս հաշուենք՝ 260 լեզուներով, և դոցանից 30 լեզուի համար մեր օրերում են գիր հնարել յատկապէս Աստուածաշունչը թարգմանելու նպատակաւ. Osserv. Rom. Վատիկանի պաշտօնական թերթը յարձակուելով հրապարակախօսի վերայ՝ Աստուածաշունչը տարածող բողոքական ժողովուրդների համար գուշակում է, թէ նոցա յառաջագիմութիւնը ժամանակաւոր է. անմահ աստուածներ, ինչպէս Յուլիոս Վեսարն է ասում, սկզբում բաղդ և յաջողութիւն են պարգևում նոցա, որոնցից յետոյ վրէժ պէտք է հանեն: Եկեղեցական թերթի այս տարօրինակ հայեցողութեան մասին իւր զայրոյթն է յայտնում Պոն—Քիշոտ՝ ո՛չ եկեղեցական և ո՛չ աւետարանական խիստ տարածուած թերթը. «Պարելլի է իւրեւ քրիստոնեայ և կաթոլիկ ընդունել, որ Իւր Որդին մարդկութեան համար մեռնելու ուղարկող Աստուածը Վեսարի անմահ աստուածներին նմանուելու հետամուտ լինի: Հաւատալի է միթէ, որ սիրոյ և գթութեան Աստուածը բողոքական ժողովուրդներին նորա համար միայն ստացուածք ու հարստութիւն է տալիս, որպէս զի յետոյ աւելի զգալի կերպով տանջանքի ենթարկէ նոցա. Օ, աստուածաբաններ, քննեցէք ձեր խիղճը, որովհետեւ դուք ո՛չ միայն ձեր մերձաւորի հետ վատ էք վարուում, այլ և անպատկառ էք դէպի Աստուած, որին մարդակերներին վայել զգացմունք էք վերագրում»:

Փարիզի առաջիկայ աշխարհագիտիկ տեղի պէտք է ունենայ նաև կրօնների համաժողով, որի համար օր է նշանակած սեպտ. 3-9ը, և արդէն նախարարութիւնից հրաւերներ են ուղարկուած մասնակցելու այդ համաժողովին: Այդտեղ կարգացուելը բոլոր բանախօսութիւնները պատմական բնաւորութիւն պէտք է ունենան, և կրօնա-

կան—գաւանաբանական վէճերն արգելուած են: Կարգադրող յանձնաժողովի նախագահն է պրոֆ. Ալբէրտ Ռըվիլլը: Համաժողովը պէտք է բաժանուի 8 բաժանմունքների. ա) Բնագաշտական կրօններ և ամբիկիական կրօններ նախ քան Կոլումբոս. բ) Ծայրագոյն արևելքի (չինական, ճապոնական, հնդկաչինական, մոնղոլական, ֆինն) կրօնների պատմութիւն. գ) Եգիպտական կրօնի պատմութիւն. դ) Այգպէս կոչուած սեմական կրօնների պատմութիւն. 1) Ասորա-քաղէական և նախասիւր կրօններ, 2) Հրէութիւն և Իսլամ. ե) Հնդկաստանի և Իրանի կրօնների պատմութիւն. զ) Յունական և հռոմէական կրօնների պատմութիւն. է) Գերմանների, Կելտերի և Սլաւոնների կրօններ. նախապատմական Եւրոպոյի հնախօտութիւնը. ը) Քրիստոնէութեան պատմութիւնը առաջին և միջին դարերում, նոր ժամանակ—Յանձնաժողովը իւր կողմից մի շարք խնդիրներ է առաջարկել, բայց դորանից դուրս ուրիշ խնդիրներ ևս կարող են բանախօսութեան նիւթ դառնալ:



ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ.

ԱՂԱՒԱՂՈՒՄՆԵՐ և ՕՏԱՐԱՄՈՒԹՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՈՑ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆՑ ՄԷՁ.

Եւս չեն գտնուի աշխարհիս երեսին ուրիշ նման հաստատութիւններ, որոնք կամայականութեան այնպիսի արժակ ասպարէզ վնէին, ինչպէս մեր եկեղեցին է: Հայոց «ազատ» եկեղեցին թոյլ է տալիս, որ ամէնքն իւր վարդապետութեան, իւր կարգերի, իւր ծէսերի հետ վարուին ինչպէս կուզեն. իրաւ է այդ եկեղեցին ո՛չ մի իրական ըստանումն չի ընդունում՝ իւր մէջ. Պետերբուրգից սկսած մինչեւ Կահիրէ, Կալկաթայից մինչեւ Ռուսոր, նորա հօտի բոլոր անդամները նոյն դաւանութիւնն ունին, եւ ննթադրուում է, թէ ամէն տեղ նոյն եղանակով, ըստ արտաքնոյն եւ ըստ ներքնոյն բոլոր մանրամասնութեամբ որոշուած միօրինակ կարգերով են պաշտում. Երիզորի Աստղծուն. սակայն իսկապէս ան-

չափ են մանր եւ ոչ աննշան տարբերութիւններն ու փոփոխութիւնները՝ ըստ մեծի մասին անգիտակցօրէն մոցրած, շատերը գուցէ տեղի եւ պարագաների պահանջման համեմատ. յամենայն դէպս՝ ո՛չ միայն հեռաւոր մութ անկիւններում, այլ նոյն իսկ ամենահայաշատ եւ լուսաւորեալ կենտրոններում ամէնքի աչքի առաջ մեր եկեղեցւոյ արարողութիւնները խանգարում են ու աղաւաղում՝ կամայականօրէն, եւ դիմադրող չկայ: Գրեթէ ամէն տէրտէր, ամէն երէցփոխան կամ համայնքի ազդեցիկ անդամ՝ իրաւունք է համարում իւր հաւանած բանը մոցնել եկեղեցւոյ մէջ եւ չհաւանածը դուրս տանել. իսկ ինչ որ մի անգամ՝ փոփոխուեց՝ սովորութեան ուժով շատ անգամ՝ հաստատուում մնում է, եւ ո՛չ որ այլ եւս չի նկատում, որ խորթ է այն եւ օտարամոտ: Այսպիսի զեղծումների դէմ բողոքներ շատ են եղել, մամուլի միջոցաւ եւս նոցա ըագմամբ օրինակներ հրապարակ են հանուել. եթէ չարիքը մնում եւ օր աւուր մեծանում է՝ դորա պատճառը համարձակուում ենք կարծել, հոգեւոր քարճազոյն իշխանութեան թուլութիւնը չէ միայն: Հարկաւ այստեղ եւս, ինչպէս առհասարակ բոլոր եկեղեցական խնդիրների մէջ, զխաւոր պատասխանատուութիւնը նորա վերայ է ծանրանում: Նա պէտք է վննի առաջին հսկողը հայրերի աւանդութեան անվթար պահպանութեան վերայ. բայց չէ՞ որ նորա ձեռքն ամէն տեղ չի հասնում, եւ ուր հասնում է՝ քարոյական հեղինակութեամբ միայն գործել կարող է: Որչափ է յարգում՝ արդեօք մեր կրօնասէր ժողովուրդն այդ հեղինակութիւնը. —Երկու տարի առաջ արած ծանապարհորդութեանս միջոցին շատ տեղեր ինձ ցոյց էին տալիս եկեղեցիներում՝ չօծուած պատկերներ եւ օտարոտի սպասներ, որ նոյն ինքն Վեհափառ Հայրապետն անձամբ հրամայել էր դուրս հանել, ու նորա մեկնելուց անմիջապէս յետոյ կրկին ներս էին քերել. ինչո՞ւ, —նորա համար երեւի որ պատկեր նուիրող մեծատունն աւելի քարճը ծայն ունի եկեղեցւոյ մէջ, քան հոգեւոր իշխանութեան ներկայացուցիչը, վերջինս սովորաբար այնպիսի մէկն է, որ կամ իւր տգիտութեան ու անընդունակութեան կամ